ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆԻ, ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱԼՖՐԵԴ ՔՈՉԱՐՅԱՆԻ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՍՏՂԻԿ ՄԱՐԱԲՅԱՆԻ ՄԵՔՍԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Գործուղված անձինք

   Վահրամ Դումանյան
   Ալֆրեդ Քոչարյան
   Աստղիկ Մարաբյան

2. Զբաղեցրած պաշտոնը

   ՀՀ ԿԳՄՍ նախարար
   ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ
   ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

   Մեքսիկայի Միացյալ Նահանգներ, ք. Մեխիկո, սեպտեմբերի 27-30, 2022 թ.

4. Հրավիրող կողմը

   ՅՈՒՆԵՍԿՕ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

   Մասնակցություն ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային քաղաքականության և կայուն զարգացման համաշխարհային համաժողովին (MONDIACULT 2022)

6. Քննարկված թեմաները.

- *Հայկական մշակութային ժառանգության պահպանության մարտահրավերները և սպառնալիքները,*
- *Ժառանգությունը և մշակութային բազմազանությունը ճգնաժամի ժամանակ,*
- *Մշակույթը հանուն կայուն զարգացման,*
- *Նորացված և ուժեղացված մշակութային քաղաքականությունը,*
- *Ստեղծարար տնտեսության ապագան:*

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

2022 թ. սեպտեմբերի 28-30 Մեխիկոյում կայացավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակութային քաղաքականության և կայուն զարգացման համաշխարհային համաժողովը, որն իրականացվում էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Մեքսիկայի կառավարության կողմից: 1982 թ. Մեխիկոյում (Մեքսիկա) տեղի ունեցած առաջին Mondiacult մշակութային քաղաքականության համաշխարհային համաժողովից քառասուն տարի և 1998 թ. Ստոկհոլմում (Շվեդիա) տեղի ունեցած ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային քաղաքականության զարգացման համաշխարհային կոնֆերանսից 24 տարի անց համաշխարհային համաժողովը նոր խթան հաղորդեց «Մշակույթը՝ հանուն կայուն զարգացման» գլոբալ քաղաքականության երկխոսությանը, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաքելություններից մեկն է:

Համաժողովը մեկնարկեց սեպտեմբերի 28-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի լիագումար նիստով, որին մասնակցում էին 150 երկրների ներկայացուցիչներ, որոնցից 135-ը՝ նախարարների մակարդակով: Հաջորդող երկու օրերին զուգահեռ տեղի ունեցան թեմատիկ նիստեր 4 հիմնական թեմաների շրջանակում՝ ժառանգությունը և մշակութային բազմազանությունը ճգնաժամի ժամանակ, մշակույթը հանուն կայուն զարգացման, նորացված և ուժեղացված մշակութային քաղաքականությունը, ստեղծարար արդյունաբերության ապագան:

Համաժողովի շրջանակում կազմակերպվեց նաև տարբեր ժողովուրդների տարազների և մշակութային տարրերի ցուցահանդես, որին Հայաստանը մասնակցեց հայկական ժանյակի ցուցադրությամբ: Ցուցահանդեսի նպատակն էր ներկայացնել MONDIACULT 2022-ին մասնակից երկրների մշակութային բազմազանությունն ու հարստությունը՝ տվյալ մշակույթներին բնորոշ գործվածքեղենի, ձեռագործ աշխատանքի, գեղարվեստի առարկաների ցուցադրմամբ:

ԵԼՈՒՅԹՆԵՐ

28.09.2022

Նախարար Վահրամ Դումանյանը ելույթով հանդես եկավ «Ժառանգությունը և մշակութային բազմազանությունը ճգնաժամի ժամանակ» թեմատիկ նիստին, որի շրջանակում ներկայացվեցին Ադրբեջանի կողմից Արցախի, ինչպես նաև Հայաստանի պատմամշակութային ժառանգությանը սպառնացող վտանգներն ու առկա մարտահրավերները:

29.09.2022

Աստղիկ Մարաբյանը, ի պատասխան Ադրբեջանի՝ Հայաստանին ուղղված կեղծ և խեղաթյուրված զեկույցի, հանդես եկավ պատասխան ելույթով՝ դատապարտելով Ադրբեջանի՝ տասնամյակներ շարունակ հայկական մշակութային ժառանգության և հայկական հետքի ոչնչացման հետևողական քաղաքականությունը:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

27.09.2022

Աշխատանքային հանդիպում «Կոնֆլիկտային տարածքներում ժառանգության պաշտպանության միջազգային դաշինքի» գործադիր տնօրեն Վալերի Ֆրիլենդի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի և Արցախի մշակութային ժառանգության պաշտպանությանն ուղղված հարցեր, մասնավորապես՝ հուշարձանների վերականգնման և թանգարանների ճգնաժամային պլանների կազմման հնարավորությունները:

Համաժողովի շրջանակում Դաշինքը կազմակերպել էր «Պաշտպանելով մեր ժառանգությունը՝ կառուցենք խաղաղություն» խորագրով փաստագրական ցուցադրությունը, որը ներկայացնում էր Դաշինքի աջակցությամբ տարբեր երկրներում իրականացվող ծրագրերը: Հայկական պատմամշակութային ժառանգությունը ներկայացված էր առանձին ֆոտոպատումով:

28.09.2022

Պաշտոնական հանդիպում ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանի և Մեքսիկայի Միացյալ Նահանգների մշակույթի նախարարի տեղակալ Մարինա Նունյեսի միջև:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է արվել մշակույթի ոլորտում երկու երկրների միջև համագործակցության խթանման, ինչպես նաև տարբեր ուղղություններով փորձի փոխանակման կարևորությանը: Քննարկվել են մշակութային միջոցառումների իրականացման, երկու երկրների ճանաչողության բարձրացման, մշակութային տուրիզմի զարգացմանն ուղղված հարցեր: Այս համատեքստում կողմերը դիտարկել են նաև համագործակցության հուշագրի ստորագրման հնարավորությունը:

30.09.2022

Գործընկերային հանդիպում Հունաստանի մշակույթի և սպորտի նախարար Լինա Մենդոնիի և Կիպրոսի Հանրապետության մշակույթի նախարարի առաջին տեղակալ Յանիս Թումազիսի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են համագործակցության ընդլայնման, մշակութային տուրիզմի զարգացման, միջազգային հարթակներում համատեղ ծրագրերով հանդես գալու, ինչպես նաև եռակողմ ձևաչափով համագործակցության հնարավորությունները:

Զրույցի ընթացքում Կիպրոսի մշակույթի նախարարի տեղակալ Յանիս Թումազիսը կարևորել է երկու ժողովուրդների պատմական փոխառնչությունները, ինչպես նաև բարձր գնահատել հայկական համայնքի դերը երկրի տարբեր ոլորտներում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- *150 երկրների կողմից միաձայն ընդունվեց «Մշակույթի հռչակագիրը», որը սահմանում է մշակույթը որպես համընդհանուր հանրային բարիք՝ արտացոլելով երկրների համաձայնությունը՝ ամրապնդել հանրային քաղաքականությունները մշակույթի ոլորտում,*
- *Պայմանավորվածություն ձեռք բերվեց Հունաստանի և Կիպրոսի Հանրապետության հետ խորացնելու եռակողմ համագործակցությունը՝ դիտարկելով հուշագրի կնքումը,*
- *Պայմանավորվածություն ձեռք բերվեց Մեքսիկայի Միացյալ Նահանգների հետ շարունակել երկկողմ համագործակցությունը՝ դիտարկելով հուշագրի ստորագրումը,*
- *Որոշվեց ընդլայնել Կոնֆլիկտային տարածքներում ժառանգության պաշտպանության միջազգային դաշինքի հետ համագործակցության շրջանակը:*

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- *Շարունակել ակտիվ աշխատանքները ՅՈՒՆԵՍԿՕ-ի տարբեր միջազգային կոնվենցիաների շրջանակներում,*
- *Հունաստանի և Կիպրոսի Հանրապետության հետ մշակույթի ոլորտում եռակողմ հուշագրի ստորագրում,*
- *Դիտարկել համագործակցության հուշագրի ստորագրումը Կոնֆլիկտային տարածքներում ժառանգության պաշտպանության միջազգային դաշինքի հետ,*
- *Անդամ երկրների հետ համատեղ ծրագրերի իրականացում:*

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Հոկտեմբերի 5, 2022 թ.

/Վահրամ Դումանյան

Ալֆրեդ Քոչարյան

Աստղիկ Մարաբյան